ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 06 » փետրվար 2025թ. No 705 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 47-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 01/420-25 առ 31.01.2025թ փորձագիտական եզրակացությունը և N 01/498-25 առ 04.02.2025թ. գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ  Ե Մ՝

1. Հաստատել թվով 8 դեղի գրանցման հավաստագրերի ժամկետի երկարաձգումը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Դեղի հավաստագրի ժամկետի երկարաձգման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է նախորդ հավաստագրի գործողության ժամկետը լրանալու հաջորդող օրվանից:

Recoverable Signature

X 

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2025 թվականի փետրվարի «06 » - ի N705 - Ա հրամանի

Գրանցման հավաստագրի ժամկետի երկարաձգման դեղերի ցանկ համաձայն ՀՀ կառավարության N 162-Ն առ 28.02.2019 որոշման

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ | Հավաստագրի գործողության ժամկետը լրանալու օրը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Արբիդոլ | ումիֆենովիր (ումիֆենովիրի հիդրոքլորիդ) | դեղապատիճներ | 100մգ; (10/1x10/) բլիստերում, (20/2x10/) բլիստերում, (40/4x10/) բլիստերում | Ֆարմստանդարտ-Լեկսրեդստվա ԲԲԸ, 305022, Կուրսկ, Ագրեգատնայա 2րդ փ., 1ա/18` | Ռուսաստան | "OՏՍՖարմ" ԲԸ, Տեստովսկայա փ, II-րդ մասնաշենք, 12-րդ հարկ, տուն 10, 29 սենյակ, Մոսկվա 123112 | Ռուսաստան | ԱԴ | 22668 30.01.2025 | 20.03.2025 |
| 2 | Պուրեգոն | ֆոլիտրոպին բետա (ռեկոմբինանտ) | լուծույթ ե/մ ներարկման | 300ՄՄ/0,36մլ;փամփուշտ 0,42մլ և (6/2x3/) ասեղներ | Ն.Վ. Օրգանոն, Մոլենշտրատ 110, 5342 ՍՍ OՍՍ- երկրորդային փաթեթավորող, որակի և բաց թողնման հսկող (իրավաբանական հասցե` Ն.Վ. Օրգանոն, Կլոստերշտրատ 6, 5349 ԱԲ Օսս, Նիդերլանդներ), Վետեր Ֆարմա-Ֆերտիգունգ ԳմբՀ և Քո. ԿԳ, Մուսվիեսեն 2, Ռավենսբուրգ Բադեն Վուրթեմբերգ, 88214, Գերմանիա- բալք արտադրող, առաջնային փաթեթավորող` | Նիդերլանդներ | Օրգանոն Սենտրալ Իստ ԳմբՀ, Վեյշտրասե 20, 6006 Լուցերն | Շվեյցարիա | Դ | 22669 30.01.2025 | 16.02.2025 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | Պուրեգոն | ֆոլիտրոպին բետա (ռեկոմբինանտ) | լուծույթ ե/մ ներարկման | 600ՄՄ/0,72մլ;փամփուշտ 0,78մլ և (6/2x3/) ասեղներ | Ն.Վ. Օրգանոն, Մոլենշտրատ 110, 5342 ՍՍ ՕՍՍ- երկրորդային փաթեթավորող, որակի և բաց թողնման հսկող (իրավաբանական հասցե՝ Ն.Վ. Օրգանոն, Կլոստերշտրատ 6, 5349 ԱԲ Օսս, Նիդերլանդներ), Վետեր Ֆարմա-Ֆերտիգունգ ԳմբՀ և Քո. ԿԳ, Մուսվիեսեն 2, Ռավենսբուրգ Բադեն Վուրթեմբերգ, 88214, Գերմանիա- բալք արտադրող, առաջնային փաթեթավորող՝ | Նիդերլանդներ | Օրգանոն Սենտրալ Իստ ԳմբՀ, Վեյշտրասե 20, 6006 Լուցերն ()-ի համար | Շվեյցարիա | Դ | 22670 30.01.2025 | 16.02.2025 |
| 4 | ՕԴԵՏՈՆ | հիմեկրոմոն | դեղահատեր | 200մգ; (50/5x10/) բլիստերում | Ադամեդ Ֆարմա Ս.Ա., 5 Մարշալկա Ջոզեֆա Պիլսուդսկիեգո փ., 95-200 Պաբիանիցե | Լեհաստան | Ադամեդ Ֆարմա Ս.Ա., 6Ա, Պիենկով, Մարիանա Ադամկևիչա փ., 05-152 Չոսնով | Լեհաստան | Դ | 22671 30.01.2025 | 21.02.2025 |
| 5 | Դիպրոսպան | բետամեթազոն (բետամեթազոնի դիպրոպիոնատ), բետամեթազոն (բետամեթազոնի նատրիումական ֆոսֆատ) | դեղակախույթ ներարկման | 5մգ/մլ+2մգ/մլ; (5) ամպուլներ 1մլ | Օրգանոն Հեյստ Բ.Վ., Ինդաստրիպարկ 30, Հեյստ-օպ-դեն-Բերգ, 2220՝ | Բելգիա | Օրգանոն Սենտրալ Իստ ԳմբՀ, Վեյշտրասե 20, 6006 Լուցերն | Շվեյցարիա | Դ | 22672 30.01.2025 | 10.06.2025 |
| 6 | Տոտ՝ Հեմա | երկաթ (երկաթի գլյուկոնատ), մանգան (մանգանի գլյուկոնատ), պղինձ (պղնձի գլյուկոնատ) | լուծույթ ներքին ընդունման | 50մգ/10մլ+1,33մգ/10մլ+0,7մգ /10մլ; (20/2x10/) ամպուլներ 10մլ բլիստերում | Ինոտերա Շուզի, Ռու Ռենե Շանտերո, Շուզի-սուր-Սիս, Վալոիր-սուր-Սիս, 41150՝ | Ֆրանսիա | Լաբորատուար Ինոտեք Ինտերնասիոնալ, 22, Ավենյու Արիստիդե Բրիանդ, 94110 Արկոյլ | Ֆրանսիա | Դ | 22673 30.01.2025 | 19.12.2024 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | ԱՑՑ 100 | ացետիլցիստեին | դեղափոշի ներքին ընդունման լուծույթի | 100մգ; (20) փաթեթիկներ 3գ | ՍալուտասՖարմա ԳմբՀ, Օտտ-վօն-Գուրիկե-Ալե-1, 39179 Բարլեբեն- բաց թողնման հսկող, ԼինդոՖարմ ԳմբՀ, Նեուշտրասե 82, 40721, Հիլդեն, Գերմանիա- բալք արտադրող, փաթեթավորող, որակի հսկող (ֆիզիկոքիմիական), ԻՄՔ - Ինստիտուտ ֆուր միկրոբիոլոջիսչե Քուալիտատսիչերունգ ԳմբՀ , Բենինգհոֆեր Վեգ 2, Մեթման, 40822, Գերմանիա- որակի հսկող (մանրէաբանական)՝ | Գերմանիա | Սանդոզ Ֆարմասյութիքալս դ.դ., Վերովսկովա փ. 57, 1526 Լյուբլյանա | Սլովենիա | ԱԴ | 22674 30.01.2025 | 15.04.2025 |
| 8 | ԱՑՑ 200 | ացետիլցիստեին | դեղափոշի ներքին ընդունման լուծույթի | 200մգ; (20) փաթեթիկներ 3գ | ՍալուտասՖարմա ԳմբՀ, Օտտ-վօն-Գուրիկե-Ալե-1, 39179 Բարլեբեն- բաց թողնման հսկող, ԼինդոՖարմ ԳմբՀ, Նեուշտրասե 82, 40721, Հիլդեն, Գերմանիա- բալք արտադրող, փաթեթավորող, որակի հսկող (ֆիզիկոքիմիական), ԻՄՔ - Ինստիտուտ ֆուր միկրոբիոլոջիսչե Քուալիտատսիչերունգ ԳմբՀ , Բենինգհոֆեր Վեգ 2, Մեթման, 40822, Գերմանիա- որակի հսկող (մանրէաբանական)՝ | Գերմանիա | Սանդոզ Ֆարմասյութիքալս դ.դ., Վերովսկովա փ. 57, 1526 Լյուբլյանա ()-ի համար | Սլովենիա | ԱԴ | 22675 30.01.2025 | 22.11.2024 |